# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/58 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **13 մայիսի 2021թ.**

2021թ-ի մայիսի 4-13-ը ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ ՀԱԱՀ հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/58 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Հ. Զաքոյան՝ | ՀԱԱՀ հիմնադրամի տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր, |
| Ա. Ներսիսյան՝ | ՀԱԱՀ հիմնադրամի բանվորական աշխատանքների համակարգող, |
| Լ. Աթանայան՝ | ՀԱԱՀ հիմնադրամի Տնտեսական վարչության առաջատար մասնագետ |
| Դ. Հակոբյան՝ | ՀԱԱՀ հիմնադրամի տնտեսական վարչության ինժեներ հակահրդեհային և անվտանգության գծով, |
| Վ. Մամիկոնյան՝ | ՀԱԱՀ հիմնադրամի մատակարարման բաժնի առաջատար մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Հ. Զաքոյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Հ. Գուլաբյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:

3. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:

4. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2021թ-ի մայիսի 4-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 14:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված գնման առարկայի ձեռքբերման համար առավելագույն ընդհանուր գինը.

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Ընդհանուր շինարարական աշխատանքներ | 15166140 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/58 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Կարապետյան փ. 9 | +374 94 440420 | azaqaryan2011@mail.ru | 01277633 |
| 2 | «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ | - | - | - | - |
| 3 | «Կաղեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ | ՀՀ Արագածոտնի մարզ գ. Բյուրական 1-ին փող. 8-րդ փակ. տ. 1 | +374 93 759672 | ekgnumner@mail.ru | 54631673 |
| 4 | «Վի Էյ Դաբլյու Ինժեներինգ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Նիկոլ Դուման փ. տ. 25 | +374 41 519999 | vawengineering@gmail.com | 00210362 |
| 5 | «Էթերնալ Հոմ ՍՍ» ՍՊԸ | ՀՀ, Երևան, Գ. Նժդեհի 30/3 2 բն 32 | +374 94 066034 | eternalhomecc@gmail.com | 02288782 |
| 6 | «Մարզանդ» ՍՊԸ | ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Գեղաձոր | +374 93 599309 | vahe.mxitaryan.2013@mail.ru | 05012047 |
| 7 | «ԱՆՆԱՐ» ՍՊԸ | ՀՀ, ք. Հրազդան, Կենտրոն թաղ., Տիգրան Մեծի 32 | +374 93 599599 | annarllc@mail.ru | 03017559 |
| 8 | «ԱՍԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Հովսեփ Էմինի 115Ա | +374 41 991091 | xxxachatryan@gmail.com | 00234257 |
| 9 | «Որդի Տարոն» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Ավան Թումանյան 3/10 | +374 77 767777 | v.dumoyan@mail.ru | 08804722 |
| 10 | «Ստարմալե» ՍՊԸ | ՀՀ ք Երևան, Գալշոյան 15/2 | +374 93 94 04 04 | info@HouseMaster.am | 03530009 |
| 11 | «Մենարշին» ՍՊԸ | ՀՀ, ք. Վանաձոր Տիգրանյան 3/41 | +374 77 14 64 64 | narek.khachatryan2017@bk.ru | 06959476 |
| 12 | «Ավագ Շին 1» ՍՊԸ | ՀՀ, ք. Հրազդան, Քաղսի 4թղմ. 88 | +374 41 210020 | tender-consult1@yandex.ru | 03024889 |
| 13 | «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Դավիթաշեն.7-րդ փողոց 1/14 | +374 98 089780 | simonyanna93@mail.ru | 00199063 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան,

բացառությամբ «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ տվյալ ընկերությունը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում (10.12.2019-10.12.2021թթ.): Վերջինիս հայտը գնահատվել է անբավարար, մերժվել է և armeps համակարգի միջոցով չի բացվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ և ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

- **«ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված.

  ✓ ծավալաթերթ-նախահաշվում ներառված «N1-2 Ջրամատակարարման ցանց» բաժնի համար հաշվարկված կշիռի շեղումը գերազանցում է սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի չափը:

  ✓ ծավալաթերթ-նախահաշիվի «Ընդամենը» դաշտում և գնային առաջարկի «Ընդամենը գինը» դաշտում նշված գումարը՝ 14490000, փաստացի ստացվող գումարից՝ 14495000, տարբերվում է:

- **«Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ-ի** կողմից ներկայացված հայտում բացակայում է **ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/58** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող աշխատանքներիկատարման ծավալաթերթ-նախահաշվի փաստաթուղթը:

- **«ՎԻ ԷՅ ԴԱԲԼՅՈՒ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում ներառված «Կառուցողական աշխատանքներ; Միջնորմներ» բաժնի համար հաշվարկված կշիռի շեղումը գերազանցում է սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի չափը:

- **«Էթերնալ Հոմ ՍՍ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված գնային առաջարկի փաստաթղթում, համաձայն Հավելված 2-ի, երկրորդ սյունակում նախատեսված դաշտը թերի է, մասնավորապես՝ նշված չէ, թե ինչի անվանումն է:

- **«ՄԱՐՁԱՆԴ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված.

  ✓ ծավալաթերթ-նախահաշվում ներառված «N1-5 Օդափոխություն» և «N1-6 էլեկտրամատակարարում և էլեկտրալուսավորություն» բաժնի համար հաշվարկված կշիռի շեղումը գերազանցում է սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի չափը:

✓ ծավալաթերթ-նախահաշիվի «Ընդամենը» դաշտում և գնային առաջարկի «Ընդամնեը գինը» դաշտում նշված գումարը՝ 8400000, փաստացի ստացվող գումարից՝ 8471500, տարբերվում է:

- **«ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված.

✓ ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարության փաստաթուղթը, համաձայն՝ Հավելված 1-ի, թերի է, մասնավորապես՝ բացակայում է ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/58 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցին սպասարկող բանկի վերաբերյալ տեղեկատվությունը;

✓ ծավալաթերթ-նախահաշվում ներառված «N1-3 Կոյուղու ցանց» բաժնի համար հաշվարկված կշիռի շեղումը գերազանցում է սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի չափը:

✓ ծավալաթերթ-նախահաշիվի «Ընդամենը» դաշտում և գնային առաջարկի «Ընդամնեը գինը» դաշտում նշված գումարը՝ 12970542, փաստացի ստացվող գումարից՝ 13176942, տարբերվում է:

- **«Մենարշին» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարության փաստաթուղթը, համաձայն՝ Հավելված 1-ի, թերի է, մասնավորապես՝ իրական շահառուների տվյալների վերաբերյալ աղյուսակում բացակայում է անձը հաստատող փաստաթղթի տեսակը:
- **«ԱՍԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված գնային առաջարկի փաստաթղթում, համաձայն Հավելված 2-ի, երկրորդ սյունակում նախատեսված դաշտը թերի է, մասնավորապես՝ նշված չէ, թե ինչի անվանումն է:
- **«Որդի-Տարոն» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված գնային առաջարկի փաստաթղթում, համաձայն Հավելված 2-ի, աշխատանքի անվանումը դաշտում նշված գնման առարկայի անվանումը սխալ է և չի համապատասխանում սույն գնման ընթացակարգով սահմանված գնման առարկայի անվանմանը:
- **«ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված.

✓ ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարության փաստաթուղթը, համաձայն՝ Հավելված 1-ի, թերի է, մասնավորապես՝ բացակայում է չափաբաժնի համարը:

✓ ծավալաթերթ-նախահաշվում ներառված «Հատակներ» բաժնի համար հաշվարկված կշիռի շեղումը գերազանցում է սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված կշիռների շեղման թույլատրելի չափը:

✓ ծավալաթերթ-նախահաշիվի «Ընդամենը» դաշտում և գնային առաջարկի «Ընդամնեը գինը» դաշտում նշված գումարը՝ 11298000, փաստացի ստացվող գումարից՝ 11299900, տարբերվում է:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Ընդհանուր շինարարական աշխատանքներ | «Մարզանդ» ՍՊԸ | 15166140 | 8400000 | 0 | 8400000 |
| | | «Վի Էյ Դաբլյու Ինժեներինգ» ՍՊԸ | | 9039062 | 1807812 | 10846874 |
| | | «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ | | 9415000 | 1883000 | 11298000 |
| | | «Էթերնալ Հոմ ՍՍ» ՍՊԸ | | - | - | - |
| | | «Մենարշին» ՍՊԸ | | 9716967.5 | 1943393.5 | 11660361 |
| | | «Ավագ Շին 1» ՍՊԸ | | 10323333.33 | 2064666.67 | 12388000 |
| | | «ԱՆՆԱՐ» ՍՊԸ | | 10808785 | 2161757 | 12970542 |
| | | «ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ | | 12075000 | 2415000 | 14490000 |
| | | «Ստարմալե» ՍՊԸ | | 12171360 | 2434272 | 14605632 |
| | | «Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ | | 12500000 | 2500000 | 15000000 |
| | | «ԱՍԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | | - | - | - |
| | | «Որդի Տարոն» ՍՊԸ | | - | - | - |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. **«Էթերնալ Հոմ ՍՍ» ՍՊԸ-ի, «ԱՍԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, «Որդի Տարոն» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել:
3. Նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել **«ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ-ին, «Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ-ին, «Վի Էյ Դաբլյու Ինժեներինգ» ՍՊԸ-ին, «Մարզանդ» ՍՊԸ-ին, «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ին, «Մենարշին» ՍՊԸ-ին և «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. **ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ-ի, «Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ-ի, «Վի Էյ Դաբլյու Ինժեներինգ» ՍՊԸ-ի, «Մարզանդ» ՍՊԸ-ի, «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ի, «Մենարշին» ՍՊԸ-ի և «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ | բավարար |
| | «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ | անբավարար |
| | «Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ | բավարար |
| | «Վի Էյ Դաբլյու Ինժեներինգ» ՍՊԸ | բավարար |
| | «Էթերնալ Հոմ ՍՍ» ՍՊԸ | անբավարար |
| | «Մարզանդ» ՍՊԸ | բավարար |
| | «ԱՆՆԱՐ» ՍՊԸ | բավարար |
| | «ԱՍԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | անբավարար |
| | «Որդի Տարոն» ՍՊԸ | անբավարար |
| | «Ստարմալե» ՍՊԸ | բավարար |
| | «Մենարշին» ՍՊԸ | բավարար |
| | «Ավագ Շին 1» ՍՊԸ | բավարար |
| | «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին, որոնք ներկայացված են ստրև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափա բաժնի N | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| | Զբաղեցր ած տեղ | Անվանում | | |
| 1 | 1 | «Մարզանդ» ՍՊԸ | X | 8400000 |
| | 2 | «Վի Էյ Դաբլյու Ինժեներինգ» ՍՊԸ | | 9039062 |
| | 3 | «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ | | 9415000 |
| | 4 | «Մենարշին» ՍՊԸ | | 9716967.5 |
| | 5 | «Ավագ Շին 1» ՍՊԸ | | 10323333.33 |
| | 6 | «ԱՆՆԱՐ» ՍՊԸ | | 10808785 |
| | 7 | «ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ | | 12075000 |
| | 8 | «Ստարմալե» ՍՊԸ | | 12171360 |
| | 9 | «Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ | | 12500000 |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Հ. Գուլաբյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Հ. Ջաքոյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ա. Ներսիսյան ____________

Լ. Աթանայան ____________

Դ. Հակոբյան ____________

Վ. Մամիկոնյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Հ. Գուլաբյան ____________

PROMOTION